

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՇԱՔԵ ԵԹԵՐՅԱՆ-ՍՔԵՅԼԸՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅՅԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ԱԶՆՈՒԱՇՈՒՔ ՏԻԿԻՆ ՇԱՔԷ ԵԹԵՐԵԱՆ-ՍՔԵՅԼԸՆ,
ՈՐ Ի ՄԷՅՆԹ ՓՕԼ ՄԻՆԻՍՈԹԱ, ԱՄՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ողջունում ենք Ձեզ եւ բերում Հայրապետական Մեր օրհնութիւնը՝ գոհութեան աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ այսօր Ձեր բարերարութեամբ հայկական մի նոր եկեղեցի է օծուում Մէյնթ Փօլ Մինիստթայում, եւ Հայոց Հայրապետաւ արդար ուրախութիւնն ունի գնահատանքի խօսք ուղղելու եւ բարձր շնորհի արժանացնելու առ մեր Սուրբ Եկեղեցին ու ժողովուրդը ունեցած Ձեր սէրը գործերով վկայած ազնուաշուք հայուհուդ:

Մեծապէս ուրախ ենք, որ ի յաւելումն Ձեր եկեղեցանուէր ընթացքի, Դուք Ձեր եղբոր հետ միասին անկեղծ սիրով ու իշխանական ոգով ստանձնեցիք նաեւ ԱՄՆ Մէյնթ Փօլ Մինիստթա քաղաքում եկեղեցու գնման եւ վերանորոգութեան հովանաւորութիւնը՝ գնահատելի աւանդ բերելով քաղաքի հայորդեաց հոգեւոր կեանքի զօրացմանն ու վերազարթօնքին: Սուրբ Սահակ սքանչելագործ Հայրապետի անունը կրող սրբավայրի լուսաւոր ու աղօթաբոյր յարկի ներքոյ բարեպաշտ հաւաքացեալները այսօր եւ ընդմիշտ պիտի փառաբանեն Բարձրեալն Աստծուն եւ արժանանան Նրա օրհնութեանը՝ բարի մաղթանքով եւ երախտագէտ հոգով յիշելով նաեւ մեծագնիւ բարերարներին:

Փառք Երկնաւորին, որ արթուն եւ արարող է հայութեան մէջ բարեգործութեան ոգին ի սփիւստ աշխարհի վարձք ամբարելով երկնքում եւ յոյս, հաւատ ու սէր՝ մարդկանց սրբերում:

Համայն հայութեան Մայր Աթոռից Մեր բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ, որ Ձեր հոգում մշտարթուն կրելով հաւատն առ Աստուած եւ որդիական սէրն ու նուիրումը առ Մայր Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը, երբեք չէք փարակուսել Ձեր ծառայութիւնները բերելու ազգային-եկեղեցական մեր կեանքի շինութեանն ու պայծառութեանը:

Բերկրաշար հոգով ընդառաջելով ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, այսու Կոնդակով սիրով Ձեզ շնորհում ենք Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պապոսյ բարձրագոյն շքանշանը:

Սրտաբուխ աղօթքով հայցում ենք, որ Ամենակալ Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի ընդանեկան Ձեր յարկը եւ զօրավիզ լինի Ձեզ բարի ու հայրենամուտ բոլոր իրագործումներում պարգեւելով երկնատուր բխրիքներ եւ յարանորոգ յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Սէյնթ Փօլ Մինիսոթայի Սուրբ Սահակ եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առաքապէս շնորհազարդի Եկեղեցու նուիրեալներին ու բոլոր հաւատացեալներին:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Զրիստոսի ընդ ձեզ ամենեւեալ ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուալ Կոնդակս ի 30-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրաւանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 108